ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/95

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Վարբադ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 06.05.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 28.04.2020թ. թիվ 26/26-1/6274-2020 գրությամբ «Վարբադ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 27.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1344-2020 գրության հիման վրա, 28.04.2020թ. թիվ 26/26-1/6274-2020 գրությամբ նախաձեռնել է «Վարբադ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վարբադ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վարբադ» ՍՊԸ-ն 06.054.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վարբադ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ «Վարբադ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2, 4 և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Վարբադ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 03.04.2020թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 17.04.2020թ. ներառյալ:

«Վարբադ» ՍՊԸ-ն 17.04.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Վարբադ» ՍՊԸ-ն 2, 4 և 6-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության՝ «Վարբադ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Վարբաղ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և Ընթացակարգի 2, 4 և 6 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո «Վարբաղ» ՍՊԸ-ին առաջարկ ներկայացնել 2, 4 և 6 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Վարբաղ» ՍՊԸ-ն 2, 4 և 6 չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Վարբաղ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Եվ այսպես, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք

դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Այսպիսով, «Վարբադ» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (03.04.2020թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (03.04.2020թ.-մինչև 17.04.2020թ. ներառյալ), այն է՝ 17.04.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը 21.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «Վարբադ» ՍՊԸ-ն 2, 4 և 6 չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Վարբադ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել /տես ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն /:

Հատկանշական է, որ նշված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Մինչդեռ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ գնահատող հանձնաժողովը «Վարբադ» ՍՊԸ-ի հայտը մերժել է ոչ թե 10 աշխատանքային օրվա ընթացքում կնքված պայմանագիրը պատվիրատուին ներկայացնելու հիմքով, այլ այն հիմքով, որ «Վարբադ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

17.04.2020թ. «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով ՀՀ պաշտպանության նախարարությանն է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Վարբադ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Վարբադ» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Ըստ պատվիրատուից ստացված բանավոր տեղեկատվության՝ 17.04.2020թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղարկած կնքված պայմանագիրը պատվիրատուն փաստացի ստացել է սահմանված վերջնաժամկետից հետո, այսինքն՝ 17.04.2020թ. հետո, ինչն էլ հիմք է հանդիսացել ՍՊԸ-ին պայմանագիրը կնքելու իրավունքից զրկելու համար:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Հարգելի պարոն Ներսիսյան, տեղեկացնում ենք, որ վերոհիշյալ փաթեթը պատվիրատուին ուղարկելու և վերջինիս կողմից ստանալու փաստը ապացուցելու համար «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից համապատասխան հարցումներ են կատարվել թե՛ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին, և թե՛ ՀՀ պաշտպանության նախարարությանը, և վերջիններիս պատասխանը ստանալուն պես՝ դրանք կներկայացվեն Ձեզ:

Միևնույն ժամանակ խնդրում ենք, որպես լրացուցիչ փաստական հանգամանք ուշադրություն դարձնել՝ Պատվիրատուի կողմից տեղեկագրում գնումների պլանի վերաբերյալ տեղեկատվության ու հրապարակման վրա, քանի որ, եթե ստացվի մի իրավիճակ, որ այն հրապարակվել է ավելի ուշ (մեր ունեցած տեղեկատվության համաձայն՝ այն ընդնահրապես հրապարակված չէ տեղակագրում), քան Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, ապա կստացվի, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի /Պատվիրատուի պատասխանող ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից/, որի արդյունքում կստացվի, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16 և 17-րդ կետերով սահմանված պահանջները: Հետևաբար

գտնում ենք, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չպետք է մեկնաբանվեն ի վնաս ՍՊԸ-ի /վերը նշված հիմնավորումը բազմիցս ներառվել է բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից՝ Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված բազմաթիվ Ընթացակարգեր մերժելու որոշման հիմքում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Վարբադ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, ի լրումն վերը շարադրված դիրքորոշման, հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք, «Վարբադ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ էր ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և Ընթացակարգի 2, 4 և 6 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո «Վարբադ» ՍՊԸ-ին առաջարկ ներկայացնել 2, 4 և 6 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Վարբադ» ՍՊԸ-ն 2, 4 և 6 չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «Վարբադ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Եվ այսպես, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

«Վարբադ» ՍՊԸ-ն 17.04.2020թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/:

Վերոհիշյալ փաթեթը պատվիրատուին ուղարկելու և վերջինիս կողմից ստանալու փաստը ապացուցելու համար «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից համապատասխան հարցումներ

են կատարվել թե՛ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին, և թե՛ ՀՀ պաշտպանության նախարարությանը, և վերջիններիս պատասխանը ստանալուն պես՝ դրանց կներկայացվեն Ձեզ:

Մինչ «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերը նշված գրությունների վերաբերյալ պատասխաններ ստացվելը՝ «Վարբաղ» ՍՊԸ-ն ուսումնասիրություն է կատարել «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի առցանց համակարգում, որտեղից պարզ է դարձել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ծրարը չի ընդունվել, նշված է եղել՝ Առաքանու հանձնման անհաջող փորձ /կցվում է/:

Այնուհետև, «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ից բանավոր տեղեկացանք, որ «Վարբաղ» ՍՊԸ-ի՝ 17.04.2020թ. փոստային առաքմանը հանձնված փոստային ծրարը ՀՀ ՊՆ չի ընդունել, սակայն «ՀԱՅՓՈՍՏ»ՓԲԸ-ի աշխատակիցները հավաստիացրին, որ հաշվի առնելով, որ նամակը պատվիրված է, վերջիններս կրկին կփորձեն հանձնել նշված ծրարը ՀՀ ՊՆ-ին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Հարգելի պարոն Ներսիսյան, ուսումնասիրելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները, ակնհայտ է դառնում, որ «Վարբաղ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում Պատվիրատուին է հանձնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում կնքվելիք՝ ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, որը անհասկանալի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի ընդունվել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/95 ընթացակարգի շրջանակներում 11.05.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1343-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 2, 4 և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Վարբադ» ՍՊԸ-ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջների համաձայն անգործության ժամկետի ավարտից հետո www.armeps.am համակարգի միջոցով «Վարբադ» ՍՊԸ-ին ներկայացվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը և ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն վերջինս սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները «Վարբադ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Կից ներկայացվում է վերը նշված մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/95 ընթացակարգի շրջանակներում 11.05.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վարբադ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 27.03.2020թ. Ընթացակարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վարբաղ» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 21.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 28.04.2020թ. թիվ 26/26-1/6274-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 27.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1344-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Վարբաղ» ՍՊԸ-ի՝ 06.05.2020թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վարբադ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 27.03.2020թ. Ընթացակարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վարբադ» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Պատվիրատուն 03.04.2020թ. էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է պայմանագիր կնքելու վերաբերյալ՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 21.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Ընկերությունը 11.05.2020թ. «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է, որ ս.թ. ապրիլի 17-ին «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով ՀՀ ՊՆ է ուղարկել պատվիրված նամակ (կցելով համապատասխան ապացույցը), որում առկա էր ՀՀ ՊՆ-ի կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-4/6 մրցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագիրը և պայմանագրի կատարման ապահովումը:

Միաժամանակ հայտնել է, որ մինչ օրս ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները կարծես թե այդպես էլ չեն ստացել նշված նամակը՝ առկա փաստաթղթերով, ավելին՝ ներկայումս կասկածի տակ է դրվում Ընկերության կողմից նամակը փոստային առաքման միջոցով 17.04.2020թ. ուղարկված լինելու փաստը:

Ամփոփելով՝ Ընկերությունը խնդրել է հայտնել հետևյալը.

1. արդյոք 17.04.2020թ. «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով ՀՀ ՊՆ-ին ուղարկվել է նշված նամակը, թե ոչ:

2. արդյոք նշված նամակը մինչ օրս ՀՀ պաշտպանության նախարարություն հասել է, թե ոչ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/95 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել

Ընկերությանն ուղղված «Հայփոստ» ՓԲԸ-ի՝ 18.05.2020թ. գրությունը, որտեղ նշվում է, որ «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված պատվիրված նամակ RR281609196AM՝ հասցեագրված ՀՀ ՊՆ-ին, 17.04.2020թ. ընդունվել է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի Աբովյանի թիվ 2201 փոստային բաժանմունքում, ուղարկվել է փոստի տեսակավորման և փոխանակման կենտրոն (ՓՏՓԿ), մշակվել է ՓՏՓԿ-ում, որտեղից ուղարկվել է հասցեն սպասարկող և հանձնումն իրականացնող Երևանի թիվ 0044 փոստային բաժանմունք: «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի Երևանի թիվ 0044 փոստային բաժանմունքում առաքանին ստացվել է 18.04.2020թ., սակայն, ելնելով երկրում ստեղծված իրավիճակից, ՀՀ պաշտպանության նախարարությունը դեռևս չի ընդունում, և պատվիրված նամակը չի հանձնվել հասցեատիրոջը ու գտնվում է փոստային բաժանմունքում՝ պահպանման ժամկետի մեջ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **<u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>*, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 17.04.2020թ., կապի կազմակերպությանը, այն է՝ «Հայփոստ» ՓԲԸ-ին, հանձնել է սահմանված փաստաթղթերը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը՝ որպես ընտրված մասնակից, չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 28.04.2020թ. թիվ 26/26-1/6274-2020 գրությամբ «Վարբաղ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**